ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

09.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/45

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Շինպլյուս» ՍՊԸ-ի կողմից 23.03.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/45 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Շինպլյուս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Շինպլյուս» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած 23.03.2018թ. բողոքով հայտնել է հետևյալը.

Գավառի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Գավառ քաղաքի Ազատության, Զորավար Անդրանիկ, Գր. Լուսավորիչ, Բունիաթյան, Սայադյան, Շահումյան, Բոշնաղյան, Հենրիկ Աբրահամյան, Օգոստոսի 23, Նալբանդյան, Զոր.Անդրանիկի 1-ին փողոցների և Կենտրոնական Հրապարակի փոսային նորոգման եւ ճաքալցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 08.02.2018թ. թիվ 104-Ն որոշումը ուժի մեջ է մտել 03.03.2018թ. և վերը նշված ընթացակարգը հայտարարվել է նշված փոփոխություններով:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ ընկերությունների հայտ են ներկայացրել նաև «Շինպլյուս» ՍՊԸ-ն և «Կապավոր» ՍՊԸ-ն:

«Շինպլյուս» ՍՊԸ-ն Ընթացակարգի հրավերի թիվ 4 հավելվածով՝ գնային առաջարկով առաջարկել է 10 920 000 ՀՀ դրամ, իսկ «Կապավոր» ՍՊԸ-ն՝ 13 950 000 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 20.03.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության.

- 2.1-րդ կետի համաձայն՝ «Կապավոր» ՍՊԸ-ի հայտը համապատասխանում է հրավերով սահմանված հայտերի կազման, ներկայացման և ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին:
- 2.3-րդ կետի համաձայն՝ «Շինպլյուս» ՍՊԸ-ի հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված հայտերի կազման, ներկայացման և ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին:
- 3-րդ կետի համաձայն՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Կապավոր» ՍՊԸ-ն:
- 4-րդ կետի համաձայն՝ «Կապավոր» ՍՊԸ-ին առաջարկել ծանուցումն ուղարկելու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է՝ հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին

անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ խորհուրդն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները.

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Այսպիսով, Գավառի քաղաքապետարանի կողմից փոսային նորոգման եւ ճաքալցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնման ընթացակարգ:

Ընթացակարգի մասնակցելու նպատակով, ի թիվս այլ ընկերությունների հայտ են ներկայացրել նաև «Շինպլյուս» ՍՊԸ-ն և «Կապավոր» ՍՊԸ-ն:

«Շինպլյուս» ՍՊԸ-ն Ընթացակարգի հրավերի թիվ 4 հավելվածով՝ գնային առաջարկով առաջարկել է 10 920 000 ՀՀ դրամ, իսկ «Կապավոր» ՍՊԸ-ն՝ 13 950 000 ՀՀ դրամ, այսինքն Ընկերությունը ներկայացրել է նվազագույն գնային առաջարկ՝ ՀՀ պետական բյուջեի միջոցները խնայելով 3 030 000 ՀՀ դրամով: Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 20.03.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությամբ անհիմն, առանց որևէ պատճառաբանության գտել է, որ «Շինպլյուս» ՍՊԸ-ի հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված հայտերի կազման, ներկայացման և ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին և 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Կապավոր» ՍՊԸ-ն, որի գնային առաջարկը՝ ի դեպ եղել է տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում առավելագույնը:

Ընկերությունը նշել է, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 08.02.2018թ. թիվ 104-Ն որոշման համաձայն գնումների բազային միավորի յոթանասունապատիկը չգերազանցող գնումների դեպքում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերից միակ չշտկվող փաստաթուղթը՝ գնային առաջարկն է, իսկ «Շինպլյուս» ՍՊԸ-ի գնային առաջարկը ներկայացվել է Ընթացակարգի հրավերով սահմանված բոլոր պահանջներին համապատասխան: Ընկերության հայտի ուսումնասիրությունից երևում է, որ հրավերով բոլոր փաստաթղթերը կցված են՝ այդ թվում նաև հրավերով պահանջվող լիցենզիան և դրա ներդիրները, բոլոր փաստաթղթերը վավերացված են էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Այս պարագայում զարմանալի է, թե Պատվիրատուն ինչ անհամապատասխանություն է արձանագրել Ընկերության կողմից հայտերի կազման և ներկայացման մեջ՝ չհիմնավորելով այդ անհամապատասխանությունները վերջինիս կողմից կազմված արձանագրության մեջ:

Ելնելով վերոնշյալ իրավական հիմքերից և փաստական հանգամանքներից՝ «Շինպլյուս» ՍՊԸ-ն գտնում է, որ Գավառի քաղաքապետարանի կողմից փոսային նորոգման և ճաքալցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի 1-ին կետով սահմանված պահանջները:

Ելնելով վորոգրյալ իրավական և փաստական հիմքերից՝ «Շինպլյուս» ՍՊԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է պարտավորեցնել «ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

- Դադարեցնել հանձնաժողովի 20.03.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 2.1 կետով, 2.3 կետով, 3-րդ կետով և 4-րդ կետով կայացված որոշումները և սույն որոշումից բխող բոլոր կայացված որոշումները:
- Ընթացակարգի շրջանակներում 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Շինպլյուս» ՍՊԸ-ին որպես նվազագույն գին ներկայացրած մասնակից:

«Շինպլյուս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 29.03.2018թ. ժամը 11:00-ի և 03.04.2018թ. ժամը 10:35-ի նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցություն, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. Գավառի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Գավառի քաղաքապետարանը Խորհրդին ուղղված 30.03.2018թ. թիվ 259 գրությամբ ներկայացրել է «ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը և խնդրել է գործը քննել առկա փաստաթղթերի հիման վրա:

Գավառի քաղաքապետարանը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 29.03.2018թ. ժամը 11:00-ի և 03.04.2018թ. ժամը 10:35-ի նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/45 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/45 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Գավառի քաղաքապետարանի կողմից Գավառի քաղաքապետարանի կարիքների համար փոսային նորոգման և ճաքալցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Շինպլյուս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.03.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի 2.3 ենթակետով կայացված որոշմամբ «Շինպլյուս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ այն չի համապատասխանում հրավերով սահմանված՝ հայտերի կազմման, ներկայացման և ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.03.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետով կայացված որոշմամբ Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Կապավոր» ՍՊԸ-ն, որին նույն արձանագրության 4-րդ կետով որոշվել է ծանուցել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Շինպլյուս» ՍՊԸ-ի 23.03.2018թ. բողոքը, Գավառի քաղաքապետարանի 30.03.2018թ. թիվ 259 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով

նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Գավառի քաղաքապետարանի կողմից Գավառի քաղաքապետարանի կարիքների համար փոսային նորոգման և ճաքալցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Շինպլյուս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.03.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի 2.3 ենթակետով կայացված որոշմամբ «Շինպլյուս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ այն չի համապատասխանում հրավերով սահմանված՝ հայտերի կազմման, ներկայացման և ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին:

Նույն արձանագրության 3-րդ կետով կայացված որոշմամբ Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Կապավոր» ՍՊԸ-ն, որին նույն արձանագրության 4-րդ կետով որոշվել է ծանուցել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Խորհուրդն արձանագրում է, որ «ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.03.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի 2.3 ենթակետով կայացված որոշումը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետին: Մասնավորապես՝ Օրենքի պահանջն է հանդիսանում այն, որ մասնակցի հայտը մերժելու դեպքում ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պարտավոր է հիմնավորել մերժման որոշումը: Տվյալ դեպքում Խորհուրդն արձանագրում է, որ «ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժելով «Շինպլյուս» ՍՊԸ-ի հայտը չի մատնանշել մերժման հիմք հանդիսացած հանգամանքները:

Ընդ որում՝ Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի և 41-րդ կետի համաձայն, այն դեպքերում երբ մասնակցի հայտում արձանագրվում է անհամապատասխանություն, որը չի վերաբերում գնային առաջարկին կամ հայտի ապահովմանը, ապա մասնակցին տրվում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն: Տվյալ պայմաններում գնահատող հանձնաժողովի որոշումից պարզ չէ նաև Կարգի 41-րդ կետով նախատեսված դրույթի կիրառելիության հարցը:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ «Շինպլյուս» ՍՊԸ-ի բողոքը սույն մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է «Շինպլյուս» ՍՊԸ-ին Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու Ընկերության պահանջին, ապա հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը չի հիմնավորել Ընկերության հայտը մերժելու մասին որոշումը, ինչպես նաև պարզ չէ Կարգի 41-րդ կետով նախատեսված ընթացակարգի կիրառելիության հարցը, ուստի Խորհուրդը գտնում է, որ «Շինպլյուս» ՍՊԸ-ի պահանջը սույն մասով ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

«Շինպլյուս» ՍՊԸ-ի-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 23.03.2018թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի՝

1. պարտավորեցնել «ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել հանձնաժողովի 20.03.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 2.1-րդ, 2.3-րդ, 3-րդ և 4-րդ կետերով կայացված որոշումները և սույն որոշումից բխող բոլոր կայացված որոշումները:

2. «Շինպլյուս» ՍՊԸ-ին «ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու պահանջի մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**